ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/128 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
4	Մեդալը բաղկացած է կախիչից և դրան կապօղակով ամրացած սկավառակից: Սկավառակի տրամագիծը 35 մմ է, այն պատրաստվում է 925 հարգի արծաթի համաձուլվածքից, պրուֆֆ տեխնոլոգիայով և արտադրվում է միայն դրոշմման ճանապարհով: Մեդալի նախապատրաստվածքի հաստությունը 2,5մմ է, կախիչի նախապատրաստվածքի հաստությունը 2,0մմ: Մեդալն անցնում է հատուկ գալվանական մշակում և ոսկեպատվում է բարձր հարգի ոսկով: Սկավառակի դիմերեսին պատկերված է ընտանիքը ձեռքի ափերի մեջ պատկերների ռելիեֆային համակցություն, որի կենտրոնում վեր է խոյանում Երևանի քաղաքապետարանի շենքի պատկերը: Մեդալի արտաքին շրջագծի կորին զուգահեռ, ուռուցիկ մեծատառերով գրված է ««ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂ»» գրվածքը: Կախիչը պատրաստվում է 925 հարգի արծաթի համաձուլվածքից, պրուֆֆ տեխնոլոգիայով և արտադրվում է միայն դրոշմման ճանապարհով: Այն անցնում է հատուկ գալվանական մշակում և ոսկեպատվում է բարձր հարգի ոսկով: Կախիչի կենտրոնական մասում Երևան քաղաքի ռելիեֆային զինանշանն է, որի աջ և ձախ կողմերում դափնու տերևներ են: Յուրաքանչյուր մեդալ պետք է դրված լինի համապատասխան տուփի մեջ /100X70X30մմ/ և ունենա իսկության հավաստագիր: 2. Որակի և գունային երանգների վերաբերյալ պահանջներ Մեդալների արտաքին տեսքը պետք է համապատասխանի նմուշի արտաքին տեսքին, ունենա նույն ռելիեֆային պատկերներն ու գրվածքները: Չի թույլատրվում՝ - Պատկերների և գրվածքների աղավաղում: - Մակերեսի վրա խազեր, քերծվածքներ, այլ հետքեր: - Ցանկացած երկու կրծքանշանի չափսերի տարբերությունը պետք է լինի ոչ ավել քան 0.1մմ: 3. Պատրաստման տեսակի վերաբերյալ պահանջներ Մեդալների միանմանությունը

	և չափսերի բարձր ճշտությունն ապահովելու համար դրանք պատրաստվում են միայն դրոշմման ճանապարհով և թվային տեխնոլոգիաների կիրառմամբ: 4. Անվանադրոշմում, հարգադրոշմում Մեդալի դարձերեսին դրոշմման եղանակով դաջվում է արտադրողի ապրանքային նշանը և արծաթի համապատասխան հարգը: 5. Համաձայնեցման ենթակա փաստաթղթեր Մատակարարի կողմից նմուշների 3Դ մոդելավորված մեդալների նկարները և հետո իրական նմուշները պետք է նախապես համաձայնեցվեն պատվիրատուի հետ:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Ереванский ювелирный завод имени Эмиля Григоряна ОАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/128 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
4	